



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF LABOR & SOCIAL  
AFFAIRS OF ARMENIA



ԱՄՆ ՄՁԳ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՊԼՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ՀՁՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

USAID SOCIAL PROTECTION  
SYSTEMS STRENGTHENING

ԱՆՀԱՊԱԳ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ  
Ապրիլի 11, 2007թ.

Հեռ.՝ (+37410) 542 611  
Էլեկտրոնային փոստ՝ info@spss.am

ՍՊՀՀ մամուլի թողարկում 2007-2

ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ:

**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՓՈՐՁԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ապրիլի 11-ին, ժամը 9:30-ին Անի հյուրանոցի Նաիրի հյուրասրահում հրավիրված կլոր սեղան-քննարկման մասնակիցները՝ կառավարության և հասարակական կազմակերպությունների (ՀԿ) ներկայացուցիչները քննարկեցին սոցիալական ոլորտի հիմնախնդիրներն ու առկա մարտահրավերները:

Քննարկումը կազմակերպվել էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ԱՄՆ ՄՁԳ Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (ՍՊՀՀ) ծրագրի նախաձեռնությամբ: ՍՊՀՀ-ն աջակցում է ՀՀ կառավարությանն, մասնավորապես ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ զարգացնելու, ամրապնդելու և կենսագործելու բարեփոխված կայուն սոցիալական պաշտպանության համակարգը:

Քննարկումների բուն թեման էր՝ Կառավարություն-ՀԿ համագործակցությունն ու գործընկերությունը, սոցիալական գործընկերության ներկա փորձը:

Կլոր սեղանի քննարկումների նպատակը՝ ՍՊՀՀ ծրագրի աջակցությամբ ՀՀ կառավարության և ՀԿ-ների միջև սոցիալական ծառայությունների մատուցման բարելավման նպատակով համագործակցության ստեղծման և զարգացման խնդիրների շուրջ հստակություն ձեռք բերելն էր:

ՍՊՀՀ ծրագրի նպատակն է ամրապնդել Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգերը, բարելավել ՀՀ կառավարության ինստիտուցիոնալ և մարդկային հնարավորությունները, ընդլայնել սոցիալական ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների հնարավորությունները:

ԱՄՆ ՄՁԳ ՍՊՀՀ ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, այցելեք <http://www.mss.am/> կայքը: